

ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐԻՉ ԱՊԱՐԱՆԵՐՅԻ ՄԱՏԵՆԱԳԻՐԸ

(ՇՈՒՐՋ 1345-1417 Թ-Թ.)

(Կենսագրունելության փվյալների քննություն)

Միշտադարի մեր գործիչներից շատերի հմամ՝ Մխիթարիչ Ապարանեցու անձին վերաբերող տեղեկությունները ևս աղքատիկ ու կցկոտու են, ուստի և նրա կենսագրությունը¹ շատ հստակ չէ, կարիք ունի հաղորդումների միատեղման, ամփոփումների և ճշգրտումների: Մխիթարիչի ծննդավայրը, առանց որևէ կասկածի, նախիջևամի գավաղի Ապարաներ գյուղու է. 1410 թվականին, երբ սկսել էր վերջնամշակման ենթարկել իր հիմնական՝ «Գիրք տրամաբանութեան» երկը², ինքն իրեն կոչել է «Փրա Մխիթարիչ»՝ սպասարոր կարգին Միաբանողաց, ազգային հայկագեան և հասարով քրիստոնեայ, ի գաւառէն Նախշեանու և յերնջակո, ի գեղջէն Ապարաններո» (Ա.8ա): Մնացան թվականը հայտնի չէ, սակայն ունի նաև հետևյալ անուղղակի պկնարկները. «քանզի այժմ Ծ. (50) ամ մերձ է, որ ի դրուն Սուրբ Գրոց դեգերեալ կամք, և ի հին և ի նոր թարքմանեալ գրեանք ի յայլոց ազգաց և յերկարացիր մարեանն և ի յայլ պարմութիւնս, և ի սուրբ և ի նախնի վարդապետաց ասացուած խոն մի վարժեալ» (Ա.10ա), «թէպէտ Ծ. ամ մերձ է գոլով մեր ի յաշխապանս անդադար ի հին և ի նոր թարքմանեալ գրեանս» (Ա.314բ), «Ծ. ամ աւելի է որ ի մէջ նոցա (հայոց - Ն. Տ.-վ.) եմք և ոչ լուեալ եմք և ոչ փեսեալ և այն» (Ա.340բ), երանց «զործն և մեր Ծ. ամ աւելի փորձեալ եմք ամենայն կերպի, բայց լուեմք յիշել վասն ամօթո» (Ա.265բ):

Այս հաղորդումների հիման վրա Ղ. Ալիշանը եզրակացրել է, որ նա ծնվել է ԺԴ. դ. «կիսում կամ աւելի առաջ»³, Մ. Ա. վան դեն Ուտենինիյն գրեթե բառացի կրկնել է նրա խոսքը և ավելի մասնավորեցրել. «Մխիթարիչը պէտք է որ ծնված լինի ԺԴ. դ. կեսերի շուրջ՝ հավաճարար մինչև 1350 թ.»⁴, իսկ Հ. Աճառյանը փոքր-ինչ իմաստափոխել է՝ գրելով. «Ապրել է ԺԴ. դարի վերջը և ԺԵ. դարի սկիզբը»⁵:

¹ Հայկական կենսամաքենագիրական որևէ փեղեկաբուի մնջ արձանագրված չէ:

² Դահլպանված է Մխիթարյանների Վենեփիկի մաքենադարանին պաքլանող երկու օրինակով. Ա. ձև. Վ^ր 334 (հեղինակի ինքնազիրն է, որ 1410 թ. հնդու երկիցս վերահակել և լրացրել է), Բ. ձև. Վ^ր 1663 (նախորդից արված անկապար ընդօրինակությունն է): Առաջինը Վենեփիկում և նոր դուս 1784-ից առաջ, երկրորդը 1790-ին հունգարիայում ստացել և Վենեփիկ է փառն Մ. Չամչյանը: Շարադրանի մնջ, փակազմված և էջահամարով եղում ենք Ա. օրինակը (այսպէս Ա.4ա):

³ Հայապարում. Պարմիքը և պարմութիւնը Հայոց, Յօրինսապ և հաւաքեալ ի Հ. Աւանդեայ վ. Մ. Ալիշան, Վենեփիկ, 1901, հ. Ա. Պաղմիք Հայոց, էջ 123 (այսուհետեւ՝ «Հայապարում, Ա.» և «Հայապարում, Բ.»):

⁴ M. A. v. d. Oudenrijn, The Monastery of Aparan and the Armenian writer Fra Mxitarič. Archivum Fratrum Praedicatorum, 1931, p. 283 (այսուհետեւ՝ Oudenrijn, Fra Mxitarič):

⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Երևան, 1946, էջ 384: Ակնհայտ քյորիմացությունն է հևոլոյալ արտահայքությունն՝ «15-րդ դարի վերջի և 16-րդ դարի սկզբի հայ ունիթոր Մխիթար Ապարաններից».- Ե. Գ. Տեր-Միհնայան, Միհնայան աղամանների ծագման և զարգացման պարմությունից, Երևան, 1968, էջ 177:

Փորձենք, թեկուզ և թեականորեն, մի փոքր փաստարկել և մանրամասնել ըստ Էռության ճիշտ այս տեսակետը. հիսուն տարվա ընթացքում «խուն մի Վարժեալ» ասեղով, անկանած, Ապարաներցին կիրառել է համեստության ընդունված եղանակը, այսինքն՝ սրանով իրականում ասում է, որ լավ հմտու է Սուրբ Գրքին, նախնի հայ վարդապետների գրվածքներին և այլ ազգերի լեզուներից արված հին և նոր (ունիտորական) թարգմանություններին: Այս ամենը վարդապետական կամ, ներկայիս բառով՝ բարձրագույն ուսման և ուսումնասիրման նյութերն էին: Հայտնի է, որ ուսումնառության այս շրջանին պետք է նախորդի հին տարրականը (գրաճանաչություն) և միջնակարգը (քահանայական), որոնց ընթացքում սովորող հասնում էր բարձր ուսման բարդություններն ու նյություններն ընկալելու ունակության ու տարիքի, որն, ըստ առկա տվյալների, շուրջ 15-ամյա հասակն էր⁶: Ըստ այս կարծում ենք, որ 1410 թ. Մխիթարիչը պետք է լիներ մոտ 65 տարեկան (15 + 50), ուրեմն և՛ ծնված շուրջ 1345 թվականին:

Դեռևս Մ. Չամչյանից սկսելով, Մխիթարիչին անդրադարձ գրեթե բոլոր հեղինակները համարել են, որ իր կյանքի սկզբում նա կաթոլիկ չի եղել, տասը տարի աշակերտել է Մխարանողների նշանավոր հակառակորդ, անգամ կարելի է ասել՝ հալածիչ Մաղաքիա Ղրիմեցուն և Սարգիս Ապրակունեցուն, ապա Զրանցից հետացել և մտել է Մխարանողների կարգ: Այսպես՝ Մաղաքիայի մասին Չամչյանն ասում է. «աս աշակերտեալ առ ժամանակ մի Յովհաննու Կախիկ վարդապետի, ինքն եւս ստացեալ էր յետոյ աշակերտու. եւ ես իսկ՝ ասէ Մխիթար Ապարանցի՝ կացի առ նմա ամս իբր տասն», ապա՝ «Մխիթար, որ կացեալ էր յառաջնորդ առ նմին Մաղաքեայ ամս տասն հանդերձ այլովք, մեկնեալ յետոյ ի նմանէ զնաց եւ ենուտ ի կարգս ունիթօնաց»⁷: Ալիշանը ևս, Չամչյանի կրկնելով, Մխիթարիչին համարել է Մաղաքիայի և Սարգիս Ապրակունեցու աշակերտու. «զառաշինն աշակերտեալ Մաղաքիայ և Սարգիս Վարդապետաց»⁸: Թեև նույնը կրկնել են նաև հաջորդ ուսումնասիրողները⁹, սակայն սա մեր հեղինակի խոսքի թյուրընկալման հետևանքով առաջացած սխալութեր է, որի պարզումը հարկադրված ենք ամենու սովորականից մի փոքր ավելի ընդարձակ քաղվածքներ անելով:

Իրենց կարգի մկանում Մաղաքիա Ղրիմեցու գործադրած հալածանքների մասին բավականին մանրամասն պատմելով¹⁰ ընթացքում Ապարաներցին ասում է, որ նա Փորադաշտ զյուղում մահացել է¹¹ կերակրից թունավորվելու հետևանքով. «ամենակարողն

⁶ Մանրամասն գրն Ռ. Վարդան վ. Հացունի, Դաստիարակությունը իին հայոց բով, Վենետիկ, 1923, էջ 133-211:

⁷ Տես Պատմութիւն Հայոց, ի սկզբան աշխարհի միջն ցամ Տեսան 1784... Յօրինակ ի Հայր Միքայէլ Վարդապետը Չամչյանց Կուսպանակությունը... Տամի Տեսան 1786, հ. Գ., ի Վենետիկ, էջ 447-8, 449 (այսուհետք՝ «Չամչ. Գ.»):

⁸ Սիսական, Քենաքրութիւն Սիննաց աշխարհի, ի Ռ. Աւանդեայ Մ. Ալիշան, Վենետիկ, ի Մխիթարյա վասն, ի Ա. Ղազար, 1893, էջ 370 (այսուհետք՝ Սիսական):

⁹ Տես Աճառյան Ռ., էջ. աշխ., էջ 384, Oudenrijn, Fra Mxitarič, p. 284.

¹⁰ Ապարաներցու գրքի այս մասը պապարված է. թվու Մ. A. v. d. Oudenrijn, Linguac Haicanac Scriptores Ordinis Praedicatorum congregationis Fratrum Unitorem et FF. Armenorum ord. S. Basilii Citra mare... Bernae, 1960, պ. 216-21 (այսուհետք՝ Oudenrijn, LHS):

¹¹ Ազգապարում. Հայ ողդափառ նվազնցոյ անցքերը սկիզբեն մինչև մեր օրերը՝ յարակից ազգային պարա-

Ասպուած ոչ փարեալ այնքան չարութեանն, նոյնժամայն՝ մինչդեռ կերակոր ի բերանս նորա էր, արկ ի նա ցաւ մահու», իսկ Մաղաքիան մահվան պահին անգամ «արար կփակ չարեաց, զրաքարսելով զքրիստոնեայսն¹², որը էին վեց մղոնաւ հետի, եթէ՝ Նորա միջնորդով դեմքին զիս»¹³: Ապա շարունակել է. «Եւ յետ սափակման նորա անդ և անցանելո ժամանակ ինչ, ոմանը չարը և արքանեակը սափանայի և դգետը ի հեռագոյն երկիրս, որ ոչ զիտին զգործս նորա, բայց միայն զուտ համբան, գրեցին ի վերայ նորա սուր սրանչելս եւ զանազան բարութիւնս զնմանէ, որ ամեննեին ոչ էր եղեալ»: Հետաքրքիր է, որ Մխիթարիչն իր «զրաքարտութիւն» համարածը չի հերքում, այլ անուղղակի զնահատականով կարծես հաստատում է նույն «զրաքարտութեան» ճշմարտացիությունը. «Բնուագոյն» երկրներում Մաղաքիային վերագրված «սուր սքանչելիքներ» հորինելով «եղեւ յօգուր բազմաց, քանզի միարան եւ ուղղափառ քրիստոնեայցն ամեններեան հասփակեցան ի հաւափս ճշմարիկս», իսկ «ընկերակիցք կեղծառին վասն սպութեանցն նորա զայթակենալ՝ թողին յայդնապէս զկրօնս հայկազեան եւ մկրտեալ ճշմարիկ մկրտութեամբ և եղեալը քահանայք, զնացին ի Կաֆա քաղաքն»: Ապա՝ «Եւ մեր, որ Ծ. ամ աւելի կացեալ էաք մերձ առ նմա, հանդերձ բազում կարգաւորօք հիացեալ զարմացաք ընդ այնքան սուր բարբաջունսն, եւ զամենայն պարմութիւնս եւ զվարդապնդութիւնս հայկեաց այնպէս սուր համարեցաք, եւ զայթակընեալը ի կրօնս նոցա սպութեանցն, պինդ կալաք զճշմարգութիւնն» (*Ա.301ա*): Հաջորդ էշում ավելացրել է. «Իսկ յետո մինչդեռ հանդիպեցաք մեր ի յայլ հեռագոյն ուրեք, լուաք սուր պարմութիւնս եւ սքանչելս եւ ասացուածս ամենայն ասացելոց, այսինքն՝ Մաղաքիան...» (*Ա.301բ*): Միաժամանակ՝ մեր հետինակը, որ իր գործի ողջ ընթացքում Հայոց կաթողիկոսներից կամ Աշամավոր Վարդապետներից շատերին ուղղափառ՝ կաթողիկ հայտարարելու առիթը չի փախցրել, Մաղաքիայի մասին միայն ասում է, թե Սարգիս Ապրակունեցուց, Զրա աշակերտներից և Սսի եպիսկոպոսներից «իբրին լուաւ զճշմարգութիւնն... յայնժամ առ ժամանակ մի դադարեաց ի չարեաց եւ դաւանեաց զճշմարգութիւնն» (*Ա.300ա*), բայց հետո վերատի՛ շարունակեց հալածանցները:

Այս քաղվածքներից կարելի է եզրակացնել միայն այն, որ ըստ Մխիթարիչի՝ Մաղաքիայի սրբության համբավը հորինել և տարածել են «Բնուագոյն» երկրներում զտնված և զրա գործերին ամստեղյակ մարդիկ, մինչդեռ ինքը և «բազում կարգաւոր» մեր, տասը տարուց ավելի Մաղաքիային աշխարհագրորեն մոտ գտնված լիմելով, զիտեն, որ զրա

գաներով պարմուած. Գրեց Մաղաքա արքայիսկապս Օրմաննեան. նախկին սպաքիարք, ի. թ. թ. § 1359, Ս. Եցմիածին, 2001, էջ 2301. (այսուհետք՝ Ազգապատում)՝ Մաղաքիայի մահվան վայրի ամենը եշում է որպէս «Երրնացակի Քարտաղի զիտ», իսկ ժամանակը՝ 1384 թ. (որ զայիս է դեռևս Չամչեանից՝ Գ. էջ 449, հմնք. նաև Սիսական, էջ 359): Լսու թովմա Սնծոփինցու՝ Ռովիան Որորնեցին վախճանվել է Մաղաքիայի մահից՝ «Գ. ամայնպոյ»՝ թովմա Սնծոփինցի, Պարմագրություն, աշխարհայիշտությամբ Լսու Խաչիլյանի, Երևան, 1999, էջ 15 (այսուհետք՝ Սնծոփինցի): Ուստի Որորնեցու մահվան թվականի հարցում վարակաբություններ կամ՝ 1386 թ. եռևապիք 6 (գրեն Ազգապատում, թ. «1366» ընդունելին երկին 1386-ն է (գրեն Սնծոփինցի, էջ 12, ծ., նաև՝ Հայկական սովորական համբակիպարան, թ. 6, Երևան, 1980, էջ 553), իսկ սրամից երեք փարի առաջը լիսում է՝ 1383, որը և Մաղաքիայի մահվան փարին է:

¹² Այս՝ «զքրիստոնեայսն» բառով կապի ունի միաբանողներին:

¹³ Թովմա Սնծոփինցին նոյնպես հաղորդում է, որ Մաղաքիան մահացել է «ողնակոր նդեալ ի սանամօրէն իրմէ՝ յաղթարմայք». գրեն Սնծոփինցի, էջ 13:

սրբության և գործած սքանչելիքների համբավը սուտ է: Միաժամանակ՝ «Ժ. ամ աւելի կացեալ էաք մերձ առ նմա» խոսքից հնարավոր է մակարերել նաև, որ Մաղաքիան Ղրիմից Հայաստան է եկել իր մահվանից տասը տարուց մի փոքր ավելի առաջ, այսինքն՝ Նախշեանի գավառում Միաբանողների դեմ նա գործել է մոտավորապես 1373-1383 թթ. ըստացքում:

Ավելին՝ Մխիթարիչը նրան աշակերտած լինել չէր կարող նաև այն պատճառով, որ իր գորի թե՛ սկզբում և թե՛ վերջում ինքն իրեն համարում է ծնունդով ուղղափառ՝ կաթոլիկ. «հոգենոր եւ մարմնաւոր ուղղափառ ծնողաց զաւակ, եւ ըստ ուխտի սուրբ հօրոն մերոն Լուսաւորչին հա՛ եւ հնազանի եւ իլու կաթոլիկ; եւ առաքելական սուրբ եկեղեցո» (Ա.8ա):

Գրքի վերջին մասում առ այս ունի նաև գրեթե համեմուկային մի հաղորդում. «ԽԱ. Յազս պարբառաց անդրդյունի հասպարութեան կաթոլիկէ սուրբ եկեղեցոյ ի ճշմարիկ հաւափն Քրիստոսի» գլխի վերջին՝ Ժ. փաստարկի մեջ ասում է, որ կաթոլիկ եկեղեցու հավատի ճշմարտացիությունն անպատճի է, ուստի «պարբ է գրաքակուսեալ անձանց երթալ եւ բնակի ի մէջ նոցա, եւ բազում ամ հոգենոր եւ մարմնաւոր աչօք փոքրել եւ որոնել գճշմարդութիւնս նոցա», ապա կրկնում է իր մասին մի անգամ արդեն ասածը. «Զանզի եւ մեր, որ ի ծնողաց մինչեւ ի ծնութիւն ուղղափառ եւ կաթոլիկէ հաւաքով դեզերեցաք ի դրուն սուրբ եկեղեցոց գրոց եւ գիպութեանց, մինչեւ գլեսաք զնոսա ամենայն իմաստահոս կառավարութեամբ» և «թէպէկ ունեաք բազում բարի կարգաւորութիւն ի շնորհացն Ասքութոյ եւ ի սուրբ եկեղեցոց», սակայն «զի սակա մի սովոր էաք հայկազեան դիմար որախութեանցն, վասն այս մինչեւ յերկուս ամսն առ սակա սակա աճեալ իմացաք գճշմարիկն, եւ ապա փառաւորելով գրեացաք զԱսքութոյ», Բնտագայում գործը սրբազնելուացների ժամանակ ավելացրել է. նաև «մարմնաւոր սեղանն նոցա եւ գունն առանել ճահաւորեալ է մաքուր սպասաւորութեամբ եւ զարդարմամբ եւ կարգաւորութեամբ, քան այլոց ազգաց եկեղեցի եւ պարարագ, որպէս եւ մեր շրջեալ գլեսաք» (Ա.288թ-9ա):

Ամենահավանական ենթադրությունն այն է, որ ուսումնառության սկզբում՝ պատանեկության տարիներին, Մխիթարիչը կասկածներ է ունեցել, թե ո՞րն է ճշմարիտը՝ հայկակա՞նը, որի կարգի մասին նախ գրել է «սովոր էաք», իսկ Բնտագայում ավելացրել՝ «զի սակա մի» ճշտգրումը, թե՛ կաթոլիկներինը. ապա երկու տարվա ընթացքում («մինչեւ յերկուս ամսն») հակվել է երկրորդի կողմը:

Մեզ հայտնի հաջորդ փաստերը բխում են Մխիթարիչի գրած և ստացած ձեռագրերից¹⁵, որոնք 11 միավոր են: 5-ի գրիչը և ստացողն ինքն է, 7-ը՝ ուղիշների գրած և իր ստացածն են. 11-ից 7-ը անթվական են, նրանցից 4-ը թվագրվում են Ժ. դարով, իսկ 3-ը՝ Ժ. դարով: Այս ձեռագրերից որոշակի թվական ունեցողները վերաբերում են 1383, 1392, 1402 և 1406 թթ.: Գրչության հայտնի վայրեղն են. հավանաբար Նախշեանի գավառ՝ 3 միավոր, Ապարաներ՝ 1, Նախշեանի գավառի Սինեական վանք՝ 1, Մակու՝ 3:

Մրանցից մեկի մեջ, որ Միաբանողների կարգի Դատաստանագործի պահպանված

¹⁴ «Հայոց» և «հայ» բառերը գրում են մնձ մասամբ այսպիսն՝ առանց «յ»-ի:

¹⁵ Մրանց մարտամասներին անդրադարձն ներ առանձին հողվածով՝ գլւն Ն. Տեր-Վարդանյան, Մխիթարիչ Ապարաներու «Գիրք գրամաբանութեան» նրկի աղյուրներից («Նոյնակի գրած և սրբացած ձեռագրերը»). - Եջմիածին, 2005, Է-Ը, լշ 94-109:

հնագույն օրինակն է, Միմիթարիչը հաղորդել է իր ընտանիքի անդամների անունները՝ հանգուցյալ հայրը՝ Գորգի¹⁶, դեռևս կենդամն մայրը՝ Երախ («կու աշխատի»), եղբայր՝ Շահ, քոյրը՝ Թովհատեմիկ: Նույն տեղում թվարկել է նաև Ապարաների վաճքի միաբաների անունները. «նախ Փրա Տէրունական փրփորի և վիճարի կարգին», Միմիթարիչ վարդապետի ճշմարդի. Փրա Գրիգորի որ մականուն կոչեցեալ Մակունցին], Ֆրա Մովսէսի, Ֆրա Միմիթարի, Փրա Մկրտչի, Փրա Միմեռնի, Փրա Յոհանիսի, Փրա Զվանիս միակեցի, Գրիգորի և լուսնի Գրիգորի, սուրբ (Պատրուածագուր) միակեցի, // (1 տող թափված) [զրեցալ] ձեռամբ նուապ ոգու եւ անարինսպ զրի Փրա Միմիթարչի. [որ յեպ]ին եմ ի կարգն եւ առաջին ի մեղաւորսն»¹⁷:

Այստեղ նախ տեսանում ենք, որ «Միմիթարիչ»-ը և «Միմիթար»-ը շատ հատակորեն տարբեր անուններ են, այսինքն՝ Միաբանողների կարգի միջավայրում որևէ Միմիթարիչ չէր կարող Միմիթար կոչվել և հակառակը: Կա նաև ավելի կարևոր խնդիր. արդյոք թվարկման երկրորդ անունը՝ «Միմիթարիչ վարդապետ ճշմարիտ»-ը, մեր Միմիթարիչին է վերաբերում, թե՞ մենք ուրիշի: Ալիշանը հիշատակարանի սկիզբը մի փոքր տարբեր կերպ է կարդացել: «Ֆր. Տէրունական Փորիորի (Վանահօր), եւ Վիճարի (աթոռակալի) ԿԳ? Ֆր. Միմիթարիչ վարդապետի ճշմարիտ», ապա կասկածել է՝ «ոչ գիտեմ ինքն իսկ էր ճշմարիտ վարդապետն այն եւ վիճար Միմիթարիչ, եթէ այլ որ համանուն» (Միսական, էջ 370): Նախ՝ այստեղ «ԿԳ» համառոտումը չի վերծանվել («կարգին»), ապա՝ անունների թվարկման մեջ «եւ» շաղկապը գործածված չէ, ուրեմն և՝ «փորիորի» բառից հետո Ալիշանի դրած ստորակետն ամստեղի է¹⁸: Ուստի համոզված ենք, որ Փրա Տէրունականը Միաբանողների կարգի թե՛ «փորիոր»-վանահայրն էր և թե՛ «վիճար»-փիտսանորդը:

Ի տարբերություն Ալիշանի կասկածի՝ Մ. Ուտենարիյնը վստահ է, որ գրիշն ինքն իրեն «ճշմարիտ վարդապետ» չէր կարող կոչել¹⁹, ուրեմն և այս որակումը վերաբերում է ա'լլ Միմիթարիչի: Իրոք՝ մեր Միմիթարիչ-գրիչը այս նույն ձեռագիրի մեջ ունի նաև հիշշատակագրություն, որոնցից երեքի մեջ ընդունված սկզբունքով և գլխավոր հիշատակարանի ոճով իր անունը համեմել է նվաստացուցիչ մակդիրներով՝ «զանպիրան» (113ր), «զիանաք եւ զանարինսպ... որ յեպին եմ ի կարգն եւ առաջին ի մեղաւորսն» (778ր), «փծուն» (216ր)²⁰: Հստ այսմ համոզված ենք, որ այս «ճշմարիտ վարդապետ»-ը մեր մատենագրից տարբեր մարդ էր, որը, իրեն տրված մակդիրի համեմատ, երկի, ոնկավարում էր Ապարաների վաճական դպրոցը: Այստեղից էլ բխում է տրամաբանական հաջորդ ենթադրություն:

¹⁶ Ձեռագրացուցակում սխալմամբ տպված է «Գորգին» ձևով. թե՞ն Մայր ցուցակ հայերէն ձևուագրաց մաքինսադարանին Միմիթարնեանց ի Վենեսփիկ, հաբոր Զ., յօրինեց Ն. Սահակ Վրդ. ճեմճնեման, Վենեսփիկ, 1996, էջ 368 (այսուհետք՝ Մայր ցուցակ Վենետիկի):

¹⁷ Տե՛ն Վենեսփիկի Միմիթարյան Մաքինսադարանի ձեռ. Ռդ 863, էջ 348ը: Գիյասվոր հիշատակարանի թերթը վնասված է. Ակադիք ունենալով Ղ. Ալիշանի բաղվածային (Միսական, էջ 370) և Ս. Վ. Ճեմճնեմյանի (Մայր ցուցակ Վենեսփիկ, Զ. սին 368) հրապարակությունները, նրանց փարզնթերցումները ճշգրիքի ենք ընազրի պագմննով՝ Մաշտոցյան Մաքինսադարան, Ալի Վայրերի ձեռագրների ժապավենների հավաքածորի Ռդ 1240:

¹⁸ Հիշարակարանի թանգրում նս այդ բաժից հնդու գրումնան նշան չկա, առանց սպորակների է նաև Ս. Վ. Ճեմճնեմյանի ընթերցումը:

¹⁹ Տե՛ն Oudenrijn, Fra Mxitarič, p. 268-9:

²⁰ Հմմիք. Մայր ցուցակ Վենեսփիկ, Զ. սին 368:

զը. Աա պետք է տարիքով զգալիորեն ավագ լիներ մեր Մխիթարիչից, որը թվական չունեցող այս ձեռագիրը գրելու ժամանակ պետք է որ համեմատաբար երիտասարդ լիներ և վանական դպրոց զլխավորելու համար դեռևս ո՛չ այնքան հասունացած:

Մեր մատենագիրն առնչվող՝ որոշակի թվական ունեցող ձեռագիրի հիշատակարան-ները վկայում են, որ 1392 և 1406 թթ. նա եղել է Մակուում: Իր «Տրամարանութեան գրքի» շարադրանքի մեջ հեղինակը մի քանի անգամ հիշում է Մակուն և իր՝ այնուղեք եղած լինելը. «ի նոյն ժամանակին կին ուն եկն ի Մակու, մինչ դեռ մեր անդ էաք» (Ա.301ա): Սակայն ուշագրավ է 1406-ին գրված ձեռագրի մի հիշատակարանի հաղորդումը՝ «գրեցի ի զաւասու Արդարութիւն ի գեօդու որ կոչի Մակու, առ պարունութեամբ պարոն Նուրադնի եւ քարունապետիս Մխիթարիչ վերակուցեալ»²¹: Հաս ընդունված սկզբունքի և ավանդութիւն աշխարհիկ տիրոջ, այս դեպքում Մակուի իշխան կամ տեր պարոն Նուրադնի անունից հետո պետք է տրվեր զավաոի հոգևոր տիրոջ՝ առաջնորդ եպիսկոպոսի անունը, մինչդեռ այդ տեղում Մխիթարիչի անունն է, որ, թվում է, գրվել է անկախ այն բանից, որ նա նաև ձեռագրի ստացողն էր: Սա շատ ուշագրավ է և ատիշ է տալիս ենթադրելու, որ.

ա. Մակուի եպիսկոպոսության աթոռն այդ ժամանակ գուցե թափուր էր, և առաջնորդի պարտականությունները կատարում էր Մխիթարիչը,

բ. Միննույն ժամանակ նա դեկապարում էր Մակուի հոգևոր դպրոցը («բարունապետ» բառն այսուղեք հազիկ թե պատվանուն լինի):

Եվ իրոք՝ մեր մատենագիրն ունի իր մանկավարժական առնվազն քսանամյա գործունեության մասին մի անողության հաղորդում. «Այլ բարերար վարդապետն թեպէտ քաջ գիեղեակ լինի չարութեան աշակերպին, սակայն անքես արարեալ՝ վերսրին հաղորդս առնէ զշարն կամօք իյրո բարութեանն, զի մի՛ ոք ասասցէ, եթէ նա եփ պատճառս չարութեան նորա, եւ դարձեալ՝ զի մի՛ դպէտ կարծեսցի յայլոց, վասն այն զինելոցն ասէ հասարակաբար, բայց թշնամին ո՛չ ցուցանէ ակն արկենօւ եւ կամ անուամբ եւ կամ մաքամբ, այլ ի ծածուկ եւ նշանա ցուցանէ սիրելեացն իյր եւ բարեկամացն, զի մի՛ դրդմեսցին դարակուսեալքն եւ կամ արեցեալ անարգեսցն զշարն: Արդ, զայս զոր գրեցաք, յոյժ սրուզի քսան ամ կրեցաք²² սակս այն օրինակ ի մենջ շարադրեցաք, եղիցի մեզ ի փորձանս սրութեան եւ պսակաց, եւ նոցա ի քառութիւն եւ ի թողութիւն մեղաց» (Ա.150թ): Կարծում ենք, որ սա, որպես դասավանդման ընթացքում հոգեքանական հնարքների կիրառմանը վերաբերող տեղեկություն, կարևոր հաղորդում է նաև հայկական մանկավարժության պատմության համար:

Վերն արդեն տեսանք, որ Մխիթարիչը «Մեծ ու Փոքր Հայոց, Վրաց եւ Ցունաց աշխարհները քայլեց ճանապարհորդութեամբ»²³. այս հաստատումը ևս հիմնված է «Տրամարանութեան գրքում» տարբեր առիթներով ասված խոսքերի վրա. «Այլ եւ մեր բազում հոգու ունէար եւ ճանապարհորդ եւ ի դառն ժամանակի եւ ի ծերութեան եւ ի գլկարութեան դրիս մեր» (Ա.321ա): Մակուից ավելի նա Կաֆայի մասին ունի տարաբնույթ այնպիսի հաղոր-

²¹ Մայր ցուցակ ծնուազրաց Արքոց Յակոբեանց, հ. Բ., Կազմոց Նորայր եպս. Պողարեան. Երուսաղեմ, 1967, լ. 202:

²² Ա. «բան ամ կրեցաք» դարձվածը քնրած լ, Բ. 153ա՝ անխաթաք:

²³ Զարպիանական Գ. Վ., «Պարմութիւն հայերէն դպրութեան ի պէտք ուսման ազգային վարժարանաց, Ա. հապոր, Նոր մագիստրազրութիւն, Վենետիկ, 1878, լ. 211:

դրսներ, որոնցով ակնհայտ է, որ երկար ժամանակ ապրել է այնուեղ: Ահա մեկը. «Կաֆա և յամնայն փեղիս ցրուեալ հայք եւ ի ժողովք... Որ եւ ի զնալն մեր ի Մեծ Հաց առ ծօվեգերայսն, հա՛ վաճառականքն որք կահն ընդ մեզ իբրև հասանէին ի ջոր ինչ, այսինքն՝ ի գեր եւ ի ծօվ, առժամայն փութօվ յուզեալ ժողովէին գերուն եւ ուրիշն՝ եթ՛ հում եւ եթ՛ եփեալ եւ կամ խորպեալ, զոր մեք ամենեւին ո՛չ կերաք վասն անսովորութեանն: Այլ և հատրարդըն ի Կաֆա քաղաք եւ յայլ քազում փեղիս հայք են, եւ զըմբռնեալ թոշունսն ո՛չ զենուին սրով, այլ ասպրուածամորք արարեալ՝ ուրիշն եւ ծախտին» (Ա.345թ-ճա):

Այս քաղվածքի, ինչպես նաև Կաֆային վերաբերող մյուս հաղորդումների մեջ ուշագրավ տեղեկություններ շատ կան: Ներկա դեպքում մեզ համար կարևոր է այն, որ Նախիշևանի Միաբանող մերը Կաֆայի իրենց եղբայրակիցներին այցելում էին նաև հետևյալ ճանապարհով. ցամաքով հասանում էին Սև ծովի հարավային ափի որևէ ճավահանգիստ (գուցե՛ Տրապիզոն) և այնուեղից իրենց ուղևորությունը շարունակում ծովով:

Նույն Կաֆային վերաբերող մի այլ հաղորդում եղակետային իմացություններ է տալիս թե՛ ընթանապես Միաբանող մերի կարգի մատենագրության և թե՛ Միսիթարիչի «Տրամաբանութեան գրքի» ստեղծման համագամանքները պատկերացնելու համար: Պատմելով, որ ուղղափառ (կաթոլիկ) եկեղեցում որևէ մեկը եթե «առնէ գիրք, վարեալ ցուցը գերադրական սուրբ աթոռոյն Հռոմայ, եւ իմաստինագոյն ուելուորքն ընթեռնուցուն առաջի վեսառն պապին, յայնժամ եթե լիցի համայստին եւ միհածայն մրգը ընդ Ալեքսիարին²⁴, եւ այլ ամենայն նախկին ասացելոց, յայնժամ սուրբ հարքն հաւանութեամբ ամեննեցուն իրով սիծիլովն կնքէ զվկայութիւնն իր ի վերայ գրոցն այն, զի ամեններեան ընդունիցին եւ գրեսցեն: Այլ եթե բան մի լիցի նմա ներիհակ Ալեքսիարին, եւ ծրայգրողն ասասցէ պարբռեալ զայն ի զոչ²⁵ կամ ի ցորմանէ եւ ո՛չ ի կամաց, ուղղեն զսխալեալն եւ ընդունիցին, ապայ եթե արարող գրոցն հակածառութեամբ կամեացի հասպարել զգրեալ ներիակութիւնն, յայնժամ այրեսցեն զգրողն եւ զգրեալն» (Բ.263թ)²⁶:

Առավել կարևոր է շարունակությունը. «Չոր եւ մեք վասն նոյն խղճի մրաց զայն գիրքս ցուցաք վելր Զվան արիեափիսկոպոսին, որ եր լիկար վեառն պապին ի յամնայն Արեւելս՝ ի փեղի Գրիգոր Լուսաւորչին, եւ քաջ վեղեակ Սուրբ Գրոց եւ դաւանութեանց, եւ նայ յոյժ հաւանեալ յանձն էառ, զի ո՛չ է ի մենց, այլ ի շնորհաց սուրբ Հոգոյն հաւաքեալ ի իին եւ ի նոր թարքմանեալ գրոց, վասն որոյ եւ մեք նախ արկաք ի Կաֆայս ի սեղանաւորս, սպասեալով վարձուց ի Տեառն՝ պարզեւողին ամենայն բարեաց» (Բ.263ա):

Այստեղից առավել քան հստակ է, որ, Միաբանող մերի այլ գործերի պես, Ապարաներցու «Տրամաբանութեան գիրք»-ը ևս ենթարկվել է պապական գուաքնությամբ և հավանություն ստացել: Գրաքննիչը՝ պապական նվիրակ (լիկատ) Զվան արքեպիսկոպոսը, անկասկած, Կաֆայի և Սուրբիստի՝ 1398 թ. հունվարի 29 - 1401 թ. օգոստոսի 8-ի շրջանի

²⁴ Մի այլ փեղում մանրամասն նկարագրել է այս «Ալեքսիար»-ը, «որ կոչի Վճռոց՝ արարեալ մեծ վարդապետին Պատրոսի» (Բ.262ա). ամենայն հավանականությամբ սա Միաբանող մերի Դարպասպանազիրքն է, որ հայերն եւ թարգմանն Պնդրոս Արքունացին:

²⁵ Բնագրում նախ գրված է «կոչէ», ապա դարձված՝ «գոչէ». այս շարադրամի մեջ բարիս իմաստը ներ բացարձրել:

²⁶ Նոդինակի ինքնազրում (Ա.' ձև. 334) այս մասը պակասում է թերթեր ներկայի:

«Joannes de Saulo Ordinis Minores» ֆրանցիսկյան եպիսկոպոսն է²⁷:

Թվում է, թե Մխիթարիչի այս հաղորդման արժանաբավատությանը կասկածել պետք չէ, որովհետև նրա գիրքը գրվել է Միաբանողների կարգի միջավայրի համար, ուստի և որևէ մեկը հետուությամբ կարող էր ստուգել և պարզել նրա որևէ հաղորդման իսկությունը: Այս դեպքում առաջանում է հաջորդ հարցը. Զվան (Հովհաննես-Զիոնվաննին) եպիսկոպոսը Մխիթարիչի գիրքը կարող կարողանալու չափ հայերեն գիտե՞ր. թվում է՝ ոչ: Ուստի կարծում ենք, որ, հավանաբար, Մխիթարիչը կամ հայերեն և լատիներեն (գուցե՛ իտալերեն) ավելի լավ ինացող մեկը բանավոր թարգմանություն է արել Զվան եպիսկոպոսի համար և այդպիսով՝ ստուգել նրա հավանությունը: Իսկ հաղորդումն ինքնին ընդում է կարևոր այլ իրողությունների բացահայտման:

ա. 1400 թվականի շուրջ Մխիթարիչը տնական ժամանակով եղել է Կաֆայում,

բ. այդ ժամանակ արդեն «Տրամաբանութեան գիրք»-ն ուներ նախնական-սկզբանական առումով պարտում տեսք.

գ. միաժամանակ հայտնի է, որ Մխիթարիչը, գուցն ընդհատումներով, իր գրքի մշակումը շարունակել է ևս մի տասնամյակից ավելի²⁸:

՚դ. ուրեմն՝ հավանական է, որ իր ձերկա վիճակով շուրջ 40 հրատարակչական մամուլ ծառակալ ունեցող նրա գրքի շարադրանքն սկսվել էր 1400-ից ևս մեկ տասնամյակ առաջ: Սա ենթադրություն է, սակայն՝ շատ տրամաբանական և իրականին մոտ, որ իր հերթին նշանակում է, թե կարող ենք վստահ լինել, որ Ժ.Դ.-Ժ. դարերի այս մատենագիրը, աշխատելով իր ապրած բոլոր տեղերում (Նախիջևան, Մակու, Կաֆա և այլն), առօրյա պարտականություններին և զբաղմունքներին զուգահեռ, իր զիսավոր երկը ստեղծել է քանի տարուց ավելի ժամանակի ընթացքում:

Կա նաև անուղղակի մի հաղորդում, որ ավելի առաջ է բերում «Տրամաբանութեան գրքի» վրա Մխիթարիչի աշխատանքի ավարտի թվականը. Մահաքիա Ղրիմեցու մահվան համգամանքները պատմելուց անմիջապես հետո նա գրել է. «Եւ յեթ Լ. (30) ամաց աւելի յաւելան և այլ եւս բազում կեղծաւորք վկայ վերոյ ասացելոց սրբութեանց» (Ա.301ա), ապա պատմում է Մարտացի աշխարհական մի քահանայի մասին, որ մարդկանց խաբում էր, թե ինը կարող է արծաթը դարձնել ուսի: Վերն արդեն տեսանք, որ Մահաքիայի մահվան թվականը 1383-ն է, իսկ 1383 + 30 = 1413. Եթե նկատի ունենանք նաև տարեքանակին կցված «աւելի» բառը, ապա կարող ենք ենթադրել Գրքի շարադրման

²⁷ Slus Hiecrisia Catholica Medii Aevi sive summorum Pontificum, S. R. E. Cardinalium Ecclesiarum antistitutum series. Ab anno 1198 usque ad annum 1431. E documentis tabularii praesertim Vaticani collecta, digesta, edita per Conradum Eubel, S. Thol. Doct., Editio altera, I, Monasterii (Munster), MDCCXIII (1913), p. 155 (այսուհետև՝ C. Eubel): Կան նաև նրան ուղղված կամ նրա անվան հիշավակությամբ 1398 թ. մարտի 6-ի և 1399 թ. սեպտ. 22-ի գրություններ. գլուխ Pontificia commisio ad redigendum iuris canonici orientalis. Fontes, Series III, Volumen XIII, Tomus I. Acta Urbani P.P. VI (1378-1389), Bonifacii P.P. IX (1389-1404), Innocentii P.P. VII (1404-1406) et Gregorii P.P. XII (1406-1415), E regestis Vaticanis et Lateransibus aliisque fonsibus collegit Alosius L. Tautu, Romae, Typis pontificale Universitatis Gregorianae, 1970, pp.111, 154-8.

²⁸ Վերև արդեն ակնարկել ենք, որ գրքի ինքնազիրը (Ա. ձև. 334) 1410 թ. գրելուց հետո նվազագույնը կրկին մի անգամ մուզ, մյուս անգամ բաց զոյնին թանաքով լրացնենք է արև ձեռագրի պատր մասնութ, լուսանցքներում և գողամներին, իսկ սա կարող էր արվել ևս 1-2 դարված բնացքում:

ավարտի նաև 1414 կամ նոյնիսկ 1415 թթ.:

Միհիթարիչի մարման թվականը անհայտ է. Բենվելով հիմնականում պապական գրագրույթումների տվյալների վրայ՝ Ղ. Ալիշանը կազմել է Նախիջևանի Միհաբանողների եպիսկոպոսների և զավառահայրերի ցանկեր, որոնցից առաջինի մեջ հիշատակել է՝ «14.. Միհիթար † 1417», այսինքն՝ սրբ Աշանակման (Ճեղադրման) թվականն անհայտ է, իսկ մահմանը՝ 1417-ը է: Քանի որ այս շրջանում Նախիջևանում Աշանակվում էին նաև օտար եպիսկոպոսներ, ուստի Ալիշանն ըստ հրակի Ակատել է: «Եկաց եպիսկոպոս Միհիթար, որոյ անուն յայս անմէ եւ զազգն, այլ ոչ իիշի գեողն եւ ազգատոհմն եւ ոչ այլ ինչ»²⁹: Հայտնի են նրա նախորդի և հաջորդի Աշանակման թվականները. Ludovicus Cometrii Ordinis Praedicatorum՝ 1403 թ. մարտի 2 և Martinus De Chiaro՝ 1419 թ. նոյն. ³⁰ Հայտնի է նաև նախորդի պաշտոնավարման ավարտը՝ 1409 թ.³¹ և հաջորդի պաշտոնավարումից առաջ եղած երկու տարվա թափուրությունը: Ըստ այս Միհիթարիչի եպիսկոպությանը մնում է 1410-1417 թթ. ժամանակամիջոցը: Թեև Ալիշանը, առանց բացատրելու, սրբ մասին նաև Ակատել է՝ «Հիսուսին թէ Ապարանեցին ից»³², սակայն թվում է՝ այս կասկածը հիմնված է նախ այն իրողության վրա, որ Միհաբանողների միջավայրում Միհիթարը և Միհիթարիչը որոշակիորեն տարբեր անուններ էին, ապա՝ մեր Միհիթարիչի գրած Դատաստանագրքի հիշատակարանում Ապարաների վաճքի միհաբանների թվարկման մեջ իրանից բացի կամ «Միհիթարիչ ճշմարիտ վարդապետ» և մի ֆրա Միհիթար: Սակայն պապական փաստաթյուրում այս եպիսկոպոսի անունը նաև Միհիթարիչ է՝ Mictareus կամ Mictaricius³³: Վերը ենթադրել ենք, որ Դատաստանագրքը գրելու ժամանակ «ճշմարիտ վարդապետ» Միհիթարիչը մեր հետինակից անհամենատ տարիքով էր, միհամանակ տեսանք, որ նոյն մեր մատենագիրը 1406 թ. Մակարում կարևոր դիրք ուներ, «Տրամաբանութեան գրքի» մեր հասած շարադրանքից երևում է, որ նրա վերջնական տարբերակը գրվել է Ապարաներում, ուստի ենթադրաբար համարում ենք, որ Միհաբանողների 1410-1417 թթ. եպիսկոպոսը մեր մատենագիրն էր: Այսպիսով, նրա ծննդյան մեր ընդունած պայմանական թվականը Ակատի ունենալով, Միհիթարիչ Ապարաներցու կյանքի ծայրային տարիները լինում են 1345-1417 թթ., իսկ տևողությունը՝ 72 տարի, որ լիովին իրական է:

Մնում է միշտ մի վկայություն ևս. 1421 թ. Միհաբանողների կարգի վերախնամող Հովհաննի Ապարաներցի³⁴ կաֆայի Ս. Նիկողայոս վանքում գրել է մի ձեռագիր ժողովածու, որի վնասված և թերի հիշատակարանում, իր ծնողների անունները տալուց հետո, խնդրում է միշտ՝ «նայ եւ զվարպեսն իմ զառաջին եւ զերկրորդ՝ գֆրայ Օգոստինոս եւ զՄիհիթարիչ // եւ զրարուինին»³⁵. Վատար ենք, որ այս Միհիթարիչը մեր Ապարաներցին է:

²⁹ Սիսական, էջ 390:

³⁰ Տե՛ս C. Eubel, p. 354:

³¹ Տե՛ս C. Eubel, նոյն գրադարան, հմնվ. Սիսական, էջ 388:

³² Սիսական, էջ 390:

³³ Տե՛ս C. Eubel, p. 155:

³⁴ Նրա մասին գրն՝ Գ. Տեր-Վարդանյան, Նոր վելմկություններ երկու հայ միհաբանների մասին. Հայաստանի ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1980/10, էջ 84-88:

³⁵ Մաշրույան Մաքնեսադարանի ձևո. Դմբ 2037, 187ա. հմնվ. ԺԵ. դարի հայերն ձևագրերի հիշատակարաններ. Մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմն Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, հ. Ա., Դմբ 296, էջ 270:

Ամփոփեմք.

- Մխիթարիչ Ապարաներցին Նախիջևանի Ապարաներ գյուղում ծնվել է շուրջ 1345 թվականին, հայրը Գորգիկն էր, մայրը՝ Երախը, որոնք Մխիթարիչի, իր եղբայր Շահի և քույր Թուլստեմիկի ծնվելուց առաջ արդեն կաթոլիկություն էին ընդունել.
- թեև առնչություններ և տեղեկություններ է ունեցել իր շրջակարքի հայադավան գործիչների ու ժողովրդի հետ, սակայն կրթվել է իր ծնված միաբանողական միջավայրում. Մաղաքիա Ղրիմեցուն և Սարդին Ապրակունեցում չի աշակերտել.
- Առվան միջավայրում էլ մշտապես ապրել և գործել է Նախիջևանում, Մակուտում և Կաֆյում.
- 1406 թ. Մակուտում եղել է տեղի հոգևոր դպրոցի «րաբունապետը» և, զուցե, կաթոլիկ թեմի առաջնորդ-եպիսկոպոսի պաշտոնակատարը.
- Իր «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց» գործի կազմում-շարադրումը սկսել է շուրջ 1390 թ., մոտ 1400 թ. այս գիրքն արժանացրել է Սուրբամատի և Կաֆայի Զվան եպիսկոպոսի (Joannes de Saulo) հավանությանը, մաքրագրում-վերջնամշակումը իր հայրեան Ապարաներում սկսել է 1410 թ. և ավարտել երկի 1414-1415 թթ.
- 1410-1417 թթ. (մինչև մահ) եղել է Նախիջևանի Միաբանող հայ եղբայրների կարգի եպիսկոպոսը: